**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**_________________________2021թ. թիվ_______________________/Ա/**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալ մինչև 2021 թվականի հունիսի 30-ը՝

1) Աշոտ Սուրենի Սարգսյանին՝ ծնված 2001 թվականի նոյեմբերի 17-ին (հաշվառման վայրը՝ ք. Երևան, Երկաթուղայինների 2 փող., 5 տուն), սովորում է Երևանի թիվ 16 ավագ դպրոցի 12-րդ դասարանում,

2) Օթար Գեորգիի Տոնականյանին՝ ծնված 2001 թվականի սեպտեմբերի 21-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նոր Կեսարիա, 9 փող., 14 տուն), սովորում է ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում,

3) Սահակ Հովսեփի Ղազարյանին՝ ծնված 2001 թվականի հոկտեմբերի 11-ին, (հաշվառման վայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Թաիրով, Մայրաքաղաքային փող., 62 տուն), սովորում է ՀՀ Արմավիրի մարզի Թաիրովի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում,

4) Սամվել Սերոժի Հարությունյանին՝ ծնված 2001 թվականի հոկտեմբերի 3-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նար-Դոսի փող., 63 տուն), սովորում է Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի 12-րդ դասարանում,

5) Էդուարդ Վալերիի Ամիրյանին՝ ծնված 2001 թվականի դեկտեմբերի 19-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ, Ստեփանյան փող., 16 տուն), սովորում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 5 ավագ դպրոցի 12-րդ դասարանում,

6) Էրիկ Սամվելի Սահակյանին՝ ծնված 2001 թվականի հուլիսի 29-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ

Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սպանդարյան փող., 29 տուն), սովորում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 13 ավագ դպրոցի 12-րդ դասարանում,

7) Նաիրի Սերյոժայի Մկրտչյանին՝ ծնված 2001 թվականի հոկտեմբերի 19-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վաղաշեն համայնք, 3 փող, 1 նրբ., 1 փակուղի, 2 տուն), սովորում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշենի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում,

8) Հակոբ Վաչագանի Թորոսյանին՝ ծնված 2001 թվականի հոկտեմբերի 6-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Մրգաշեն, 7 փող., 10 շենք, 17 բն.), սովորում է ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշենի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում,

9) Սուրեն Երեմի Պապիկյանին՝ ծնված 2001 թվականի սեպտեմբերի 10-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Ստեփանավան, Կամոյի փող., 80 տուն), սովորում է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 6 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում,

10) Ռաֆայէլ Կարոի Հակոբյանին՝ ծնված 2001 թվականի դեկտեմբերի 12-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Զվարթնոց թղմ., Այգեստան փող, 14 տուն), սովորում է ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի թիվ 10 ավագ դպրոցի 12-րդ դասարանում,

11)Կառլեն Արտյոմի Մուրադյանին՝ ծնված 2001 թվականի հոկտեմբերի 8-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տրդատ Ճարտարապետի փող., 7 շենք, 10 բն), սովորում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Ակադեմիական վարժարանի 12-րդ դասարանում,

12) Ժիրայր Կառլենի Հարությունյանին՝ ծնված 2001 թվականի օգոստոսի 17-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Գ.Նժդեհի փող., 15 տուն), սովորում է ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի թիվ 1 ավագ դպրոցի 12-րդ դասարանում,

13) Ռաֆիկ Հայկի Օհանյանին՝ ծնված 2001 թվականի նոյեմբերի 25-ին (հաշվառման վայրը՝ ք. Երևան, Բագրատունյաց փող, 34Ա շենք, 7 բն.), սովորում է Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի 12-րդ դասարանում,

14) Արթուր Գագիկի Մադոյանին՝ ծնված 2001 թվականի նոյեմբերի 3-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, գ. Գտաշեն, 2 փող., 1 փկղ., 1 տուն), սովորում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 37 ավագ դպրոցի 12-րդ դասաանում,

15) Համլետ Կարենի Մկրտչյանին՝ ծնված 2001 թվականի նոյեմբերի 25-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Սունդուկյան փող., 282 տուն), սովորում է Շիրակի մարզի «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի» ավագ դպրոցի 12-րդ դասարանում,

16) Նարեկ Ալիկի Ասրյանին՝ ծնված 2001 թվականի հոկտեմբերի 12-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ռուսթավի փող., 7 շենք, 77 բն), սովորում է ՀՀ Լոռու մարզի

Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի 12-րդ դասարանում,

17) Գրիշա Սուրիկի Ղուշյանին՝ ծնված 2001 թվականի դեկտեմբերի 17-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Սմբաթ Զորավար փող., 34 տուն), սովորում է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի արհեստագործական պետական ուսումնարանի 3-րդ կուրսում,

18) Հարություն Արմենի Սարգսյանին՝ ծնված 2001 թվականի դեկտեմբերի 29-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Խորենացի փող., 3 շենք, 8 բն.), սովորում է Լեհաստանի Հանրապետության Վարշավայի Վլադիսլավ Ս. Ռեյմոնտի անվան հանրակրթական ավագ դպրոցի 3-բ դասարանում,

19) Նվեր Արմանի Քալաշյանին՝ ծնված 2001 թվականի նոյեմբերի 12-ին (հաշվառման վայրը՝ ք.Երևան, Ավան, 14 փող., 41 տուն), սովորում է ՌԴ Կրասնոդարի երկրամասի Կավկազսկի շրջանի Ս.Վ.Ցելիխի թիվ 1 հանրակրթական միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալ մինչև 2021 թվականի հուլիսի 31-ը՝

1) Վանիկ Աղասիի Ասրյանին՝ ծնված 2002 թվականի մարտի 15-ին (հաշվառման վայրը՝ ք.Երևան, Ավան, Աճառյան փող., 15 շենք, 1 բն.), սովորում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆի Լեո Շտաձի անվան մասնագիտական քոլեջի (առևտրային ավագ դպրոցի) «Տնտեսագիտություն և կառավարում» կրթական բաժնի1-ին դասարանում:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ձմեռային զորակոչից տարկետում տալ մինչև 2022 թվականի հունիսի 30-ը՝

1) Հարություն Հարութի Մնացականյանին՝ ծնված 2001 թվականի նոյեմբերի 27-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արարատի մարզ, Նոր Խարբերդ համայնք, 19 փող., 128/4 տուն), սովորում է ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում,

2) Ալիխան Խուդեդայի Ջանգոյանին՝ ծնված 2001 թվականի դեկտեմբերի 16-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ակունք, 12 փող., 9 տուն), սովորում է ՀՀ Կոտայքի մարզի Կոտայքի Ս.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում,

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

ՀՀ կառավարության որոշման նախագծում նշված ՀՀ քաղաքացիները սովորում են Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով և չեն ավարտել պարտադիր հանրակրթական ծրագիրը:

ՀՀ կառավարության որոշման նախագծում նշված 1) – 19) համարի ՀՀ քաղաքացիները ուսումնառությունը ավարտելու են 2021 թվականի հունիսի 30-ին, Վանիկ Աղասիի Ասրյանը ուսումնառությունը ավարտելու է 2021 թվականի հուլիսի 31-ին, Հարություն Հարութի Մնացականյանը և Ալիխան Խուդեդայի Ջանգոյանը ուսումնառությունը ավարտելու են 2022 թվականի հունիսի 30-ին:

Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասը՝ առաջարկում եմ վերոհիշյալ ՀՀ քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ձմեռային զորակոչից տալ տարկետում: Իրավական ակտի ընդունումը թույլ կտա վերը նշված ուսանողներին ստանալ պարտադիր հանրակրթական կրթություն:

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություն չի առաջացնի:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

| | | |
|---|---|---|
| **1. ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** | | 29.12.2020թ .<br>N -Մ-100929-2020<br>17.03.2017թ.<br>N-Մ-15370-2021 |
| 1. Ռ. Մովսիսյանը (ծնվ.՝ 30.08.2001թ., ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Շիրակի ՄՏՍ), Տ. Սոխակյանը (ծնվ.՝ 15.12.2001թ., ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Լոռու ՄՏՍ), Ա. Գրիգորյանը (ծնվ.՝ 03.01.2001թ., ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արագածոտնի ՄՏՍ), Վ. Մովսիսյանը (ծնվ.՝ 01.10.2001թ., ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Սյունիքի ՄՏՍ) և Ա. Զեյնալյանը (ծնվ.՝ 24.11.2001թ., ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արարատի ՄՏՍ) ենթակա չեն զորակոչի 2020թ. ձմեռային զորակոչի շրջանակներում, քանի որ օրենքով սահմանված հիմքերով նախկինում նրանց տրված է տարկետում՝ համապատասխանաբար առաջին երեք քաղաքացիներին՝ մինչև 2021թ. ամառային, իսկ վերջին երկու քաղաքացիներին՝ մինչև 2022թ. ձմեռային զորակոչերը: | **Ընդունվել է** | |
| 2. Նվեր Արամի Քալաշյանին ՀՀ կառավարության որոշման նախագծում ընդգրկելու վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունեն: | **Ընդունվել է** | |
| **2. ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** | | 17.02.2021թ.<br>N 01/27.1/3796-2021 |

| | | |
|---|---|---|
| 1. Նախագծի 2-րդ կետի ենթակետերի համարակալումը վերանայման կարիք ունի: | **Ընդունվել է** | |
| **3. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ** | | 19.03.2021թ.<br>N 02/10.20/8740-2021 |
| 1. Էրիկ Սամվելի Սահակյանի մասով, ով ծնվել է ***2001 թվականի հուլիսի 29-ին***, նախագծից և կից ներկայացված փաստաթղթերից պարզ չի դառնում, թե ինչ պատճառով 2020 թվականի ամառային զորակոչի շրջանակներում քաղաքացին չի զորակոչվել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 23-ի թիվ 593-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ ի թիվս այլոց 2020 թվականի մայիսի 1-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ հայտարարվել է Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը, որոնց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նախկինում տրված տարկետումը դադարել է մինչև 2020 թվականի հուլիսի 31-ը ներառյալ:<br><br>Հաշվի առնելով «Զինվորական | **Չի ընդունվել**<br>Էրիկ Սամվելի Սահակյանը 2019 թվականի ձմեռային զորակոչից ստացել է տարկետում մինչև 21.10.2020 թվականի ձմեռային զորակոչ առողջական խնդիրների պատճառով:Կցագրման վկայականի պատճենը կցվում է: | |

| | |
|---|---|
| ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետով ամրագրված դրույթն առ այն, որ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, <u>*սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը*</u>՝ ողջամտորեն ենթադրելի է դառնում, որ Է. Ս. Սահակյանը ենթակա է եղել 2020 թվականի ամառային զորակոչին: | |
| 2. Համլետ Գևորգի Դավթյանի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերից պարզ է դառնում, որ վերջինս սովորում է Լատվիայի Հանրապետության Ռեզեկնեի տեխնիկումի 4-րդ կուրսում՝ միջնակարգ պրոֆեսիոնալ ուսուցման ծրագրով:<br><br>Հարկ է նշել, սակայն, որ նախագծին կից ներկայացված փաստաթղթերից պարզ չի դառնում, թե որ կրթական ծրագրի տեսակին է համապատասխանում քաղաքացու կրթությունը (նախնական մասնագիտական (արհեստագործական), թե միջին մասնագիտական)՝ որպեսզի հնարավոր լինի գնահատել ՀՀ կառավարության՝ տարկետում տալու իրավասության առկայությունը: | **Ընդունվել է** |
| 3. Սուրեն Երեմի Պապիկյանի մասով, չնայած նրան, որ դպրոցի կողմից տրված | **Մասամբ է ընդունվել**<br>Ձևաթուղթը պաշտոնական |

| | |
|---|---|
| տեղեկանքում փաստվում է միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում սովորելու մասին, այնուամենայնիվ, կից ներկայացված «Ձև 3» փաստաթղթում առկա է անհասկանալի նշում *միջին մասնագիտական* ______ ծրագրով ուսումնառության մասին: | տեղեկանք չէ, ուսումնական հաստատության կողմից վրիպակ է ձևաթուղթը հանրակրթական ծրագրով ուսումնառության մասին ձևաթղթի հետ, որտեղ հիմնականում նշվում է ՀՀԶԿ տարածքային ստորաբաժանման հաշվառման տեղեկատվությունը: |
| 4.Նախագծի 10-րդ կետում նշված քաղաքացու անունը անձնագրում նշված անվան հետ նույնական չէ: | **Ընդունվել է** |
| 5.Որոշ քաղաքացիների մասով ներկայացված փաստաթղթերում բացակայում է Օրենքի ուժով նախկինում տարկետում ստացած լինելու փաստը հավաստող տեղեկատվությունը: | **Մասամբ է ընդունվել** ՀՀ պաշտպանության նախարարության տրված կարծիքում՝ բացի նշված ՀՀ քաղաքացիներից, մնացած բոլորի վերավերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունը առարկություն չունի: |
| 6.Վարչապետի՝ 2020 թվականի մարտի 6-ի թիվ 02/10.20/7087-2021 հանձնարարականի պահանջներն ամբողջությամբ չեն իրագվել, մասնավորապես՝ պահպանված չէ ամփոփաթերթի ձևաչափը: | **Ընդունվել է** |